նին զրկուած է իր խորհրդական գործակիցներէն։

Վարչական ժողովները կազմալուծուած են։

Ազգային ժողովի վերջին ուրբաթ օրուան նիստին մէջ վարչութիւնը կազմալուծուած համարելու որոշումը բոլորովին սպանուած է անոնց աշխատելու եռանդը, և պատրիարքին հրաւէրին անոնք չեն պատասխանած դարձեալ այս չորեքշաբթի, որով դարձեալ ոեւէ որոշում կարելի չէ եղած տալ։

Արշարունի պատրիարք լքուած է հիմա իր գործակիցներէն և ասիկա ազէտալի կացութիւն մըն է, որուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ ազգային ժողովին վրայ, որ այս շաբթուն ալ նիստ չըրաւ կացութեան դարման տանելու համար։

Այս ներքին ողորմելի վիճակին չափ ցաւալի է նաև հայոց համար յունաց տիեզերական պատրիարք Յովակիմ սրբազանի հրաժարականը, որ կը տակարացնէ ոչ իսկ տարրերուն հեղինակութիւնը, քանի որ այս փոքր ու պատկառելի ծերունին իր անհատական հեղինակութեամբ և մեծ փոքձառութեամբ կրնա ունեցող վարիչ մըն էր, պատրիարքարաններու գործակցական դիմումներուն ուժ ու ոգի տալու համար։

Յովակիմ պատրիարք յոյն խառն ժողովի հետ ունեցած անհամաձայնութեան մը հետեւանքով ուած է իր հրաժարականը, ինչ որ մեզի ուղղակի ցաւ կը պատճառէ, քանի որ յոյն ազգին տագնապն ուղղակի պիտի ազդէ հայոց, զի պատրիարքարանի դիմումները պիտի առկախուին։

Արշարունի պատրիարք այս պայմաններուն մէջ սովորական պարզ դիմումներով, Հայաստանէն ստացած հարստահարութեանց լուրերը Բ. Դռան տեղեկագրելով կը բաւականանայ, սպասողական դիրքի մէջ մնալով և աւելի լաւագոյն օրերու սպասելով։

Արշարունի պատրիարք վերջերս իբեն այցելողներու կը պարզէ կացութիւնը և զօրաւոր վարչութեան մը պէտքը ցոյց կուտայ և պարզապէս կը փափագի, որ արդի վարչութեան յաջորդը կազմուի կարող անձնաւորութիւններէ։ Առանց զօրաւոր վարչութեան մը պատրիարքը ինքզինքն անձեռնհաս կը համարէ բռնադրակ պատասխանատուութիւնը տանիլ և միակ անձնական աշխատութեամբ մը գործերը վարել և առաջացնել։

Արշարունի սրբազան սահմանադրական իրաւունք կը համարէ պատրիարքին համար գործել ինքնագլուխ՝ պատասխանատու մնալով վարչութեան, սակայն յետոյ հակադրող վարչութիւնը պէտք է ուժով վարչութիւն մը ըլլայ և կարող դատելու։

Վարչութեան տկարութիւնը շատ կը տկարացնէ պատրիարքին դիրքը, որ իրաւամբ ամրանալու կը կարօտի սահմանադրական օրէնքով։ Շառայլ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՐՕՍՏՐԱՏՆԵՐԸ

—

Մենք հայերս առհասարակ սիրում ենք ոչ մի բանից յետ չը մնալ, ոչ միայն յետ չենք մնում, այլ մինչև իսկ աշխատում ենք ուրիշ ազգերից էլ առաջ անցնել։

Ոչ միայն առաջ անցնել ենք ուզում, այլ մինչև իսկ մեր խորհուրդներով ու գործելակերպով իբր թէ նկրտում ենք մեզ հրեան պաբսիկ, թիւրք և ռուս ժողովրդին էլ հմտղել սահմանադրական և այլ... ականների օգտաւէտութեան մէջ։

Թիւրքիայում, Պարսկաստանում սահմանադրութիւն մտցրինք (sic), շուտով նաև երրորդ հարեան պետութեան մէջ մենք լիակատար... և այլն։

Արդեօք այս ինչ է։

Հերօստրատութիւն չէ։

Եւրօպական վեց մեծ պետութիւններից մէկը՝ Իտալիան պատերազմում է Թիւրքիայի դէմ և գրաւում Տրիպոլիսը։ Սահմանից այն կողմը՝ թայֆան Եւրօպային ուղղած իր թռուցիկներով բողոքում է Իտալիայի դէմ...

Այս ինչ է արդեօք։

Հերօստրատութիւն չէ։

Հապա ինչու թայֆան չէ բողոքում, որ սահմանադրական Թիւրքիան սահմանադրական Պարսկաստանից գրաւում է զօրքերով կօտուրը և այլ գաւառները...

Ազատութեան, արդարութեան և հաւասարութեան վայրում՝ սահմանադրական (!?) Թիւրքիայում թայֆան գումարում է եկեղեցիներում միտինգներ, հակառակ մինչև իսկ կաթողիկոսական չը թոյլատրող կօնդակի, և իր նողկանքը (!?) վիժում մի իբր բարբարոս, անսահմանադրական և այլն և այլն... հարեան կառավարութեան դէմ։

Հերօստրատութիւն չէ այս արդեօք։

Փակվեց Թիւրքական առաջին պարլամենտի նստաշրջանը և արձակվեց «Հօրիզօն» լրագրի Պօլսի թղթակցից իմանում ենք, որ թայֆական հերոսները առանձին պարծանքով մատնանշում են այն, որ միմիայն հայ մէբուսներն են ամենից լաւ պաշտպանել «աշխատաւորականների շահերը...» թիւրքական պարլամէնտում։

Հերօստրատութիւն չէ այս արդեօք։

Կարծէք թէ Թիւրքիայի ժողովուրդների և մանաւորապէս հայ ժողովրդի համար ամեն ինչ թիւրքիայում թամամ է... և մնում էր միայն «աշխատաւորականների շահերի» պաշտպանութիւնը, որ յատկապէս յանձն են առնում իրանց վրա հայ մէբուսները, և ուրիշ ոչինչ չեն անում, բացի փքուն ու ճռճռան ֆրազներով ճառեր արտասանելուց...

Հէնց այս օրերս էլ մեր թայֆական հայ մէբուսները, հակառակ ալբան մէբուսների, վստահութեան քուէ են տալիս երիտասարդ-թիւրքական կաբինէտին, հաստատել ուզենալով՝ որ Թիւրքական Հայաստանում «երջանկութիւնն և անդորրութիւնը կը տիրէ կոր...» չնորհիւ երիտասարդ-թիւրքական սահմանադրական (sic) կառավարութեան։

Ապա այս ինչ է, եթէ ոչ հերօստրատութիւն։

Բաւական է. այժմ անցնենք սահմանից դէպը և նկարագրենք այս կողմը կատարված հերօստրատական քաղաքագործութիւնների մասին։

Տեսնում է «Մշակ» լրագրի 40-ամեայ յօբելեանը։ Մի յօբելեան, որ միայն պատիւ կարող է բերել մեզ պէս փոքր ու երկրորդական նշանակութիւն ունեցող ազգի համար։ Եւ այդ առիթով ահա թէ ինչ է տեղի ունենում։

Մի ինչ-որ հալաբարեան ակումբի նոր բաժնի աւագները որոշում են, որ «Մշակը» չէ կարող արժանանալ իրանց բարձր ուշադրութեան և գնահատութեան և ուրեմն չը պէտք մասնակցել յօբելեանին...

Ex ungue leonem, ex auribus asinum.

Օրինակը վարակիչ է։

Հայ Ուսուցչական Միութեան վարչութիւնն էլ չուզեց յետ մնալ հալաբարեան ակումբի աւագներից և վճռեց չը մասնակցել յօբելեանին։ Ուսուցիչ, ուսուցչութիւն, որ դէմ է գնում և անարժան է համարում մի լրագրի 40-ամեայ գոյութեան տօնումը ողողուել...

Հալաբարեան ակումբի աւագների և Ուսուցչական Միութեան վարչութեան վերոյիշեալ խնդրում վայելած դափնիները հանգիստ չեն տալիս ուրիշներին։ Դրանց հետեւում են մեծ ոգևորութեամբ «Հօրիզոնի» զեկավարները, Երևանի թեմական դպրոցի ուսուցչութիւնը և այլն և այլն։

Թիֆլիսում գոյութիւն ունի մի յանձնաժողով, որ ստանձնել է հայ տպագրութեան 400-ամեակի տօնակատարումը։ Միևնոյն ժամանակ կազմված է էջմիածնում յանձնաժողով, և գրերի դիւտի և տպագրութեան յօբելեանը՝ կաթողիկոսի յատուկ կարգադրութեամբ՝ պէտք է տեղի ունենան հոկտեմբերի 13-ին։

Թիֆլիսի յանձնաժողովը որոշել է տօնել նոյեմբերի 26-ին։

Եւ ահա այդ յանձնաժողովը փրփրալից բողոքով գոչում է ի լուր ամենեցուն, թէ ինչու մի կաթողիկոս... և այլն։ Քանի որ իրանք որոշել են տօնել նոյեմբերի 26 ին, բոլորը պէտք է իրանց լսեն և ոչ թէ համաձայնվի մի որևէ մէկը, մինչև իսկ Վեհը իրանց դէմ գնայ։

Յանձնաժողովը մինչև իսկ իրան վիրաւորված է համարում և, ամեն պայմանից ու բանից բարձր հեղինակութիւն համարելով իրան, յայտարարում է, թէ այնու ամենայնիւ ինքը տօնումը կատարելու է նոյեմբերի 26-ին և իր համար ոչ մի նշանակութիւն չունի Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշումը։

Կաթողիկոսը պարտաւոր է մինչև իսկ բաւարարութիւն տալ վիրաւորված յանձնաժողովին, ինչպէս ակնարկվում է յանձնաժողովի յայտարարութեան մէջ։

Ահա ձեզ բուն հայ հոգուն պատկանող ընտրող յատկութիւններից մէկը։

Արդեօք, ընթերցող, սա էլ մի նոր նմուշ չէ հերօստրատութեան։

Եթէ Ցունաստանը մի հատ Հերօստրատ տուեց, որը իր անունը պատմութեան մէջ յաւերժացնելու համար հրդեհեց 365 թ-ին Եֆեսում Դիանայի տաճարը, հայերս, ինչպէս երևում է, ընդունակ ենք Հերօստրատներ դիւժիններով տալու։ Կալիաս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՅԱՒԵՐԻՑ

XIV

Դրական Ֆօնդ

«Հաւը երազում կուտ է տեսնում», ասել է հայկական առածը։ Ու հետեւելով հայ իրականութեան մէջ ամաչացած վերջին խոշոր դէպքերին, հայ գրողների համար էլ կարելի է այս առածը ձեւակերպել՝ «հայ գրողը երազում ֆօնդ է տեսնում»։

Այո, նա իր կոպիտ փայտների մէջ պառկած, խարխուլ, քարոտ քանդ՝ անունով միայն սենեակ, այլ աւելի շուտ ընի մէջ՝ ժպիտը երեսին տեսնում է, որ արդէն անցել են նեղութեան, չարքաշ ատրութեան անապահով օրերը, երբ նա ամը սրտին սպասում է ամեն բոպէ, որ քաղցը, ցուրտը, հիւանդութիւնը ու թշուառութեան միւս բոլոր հարազատ զաւակները դէպի իրան են պարզելու իրանց նետերը։ Այո, անցել է այդ ժամանակը, այժմ լեռան ետեւից դուրս է եկել քնքոյշ տաք արեւն ու աւետում է թմրած երկրին, մերկացած ծառերին ու դաշտերին, որ էլ չը կայ ձմեռ, մանուկ գարունն է արդէն եկել։